

Արձանագրություն

թիվ 9

Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի
Գիտական խորհրդի նիստի, կայացած 2016թ. ապրիլի 29-ին

Օրակարգ՝

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագհի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Դեղագիտության և օրգանական քիմիայի ամբիոնների վարիչների հաշվետվության լուսմները 2015-16 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Այսօր պետք է լսենք ուսանողական խորհրդի նախագահի հաղորդումը: Հարցը նրանում է, որ ըստ կանոնակարգի ուսանողական խորհրդը հաշվետու չէ ֆակուլտետի խորհրդին:

- Բաղդասարյան Սոնա – ՈւԽ նախագահ

Ներկայացնում է հաղորդում 2015-16 ուս. տարում կատարած աշխատանքների մասին(հաղորդում կցվում է):

2. Դեղագիտության և օրգանական քիմիայի ամբիոնների վարիչների հաշվետվության լուսմները 2015-16 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

(հաշվետվությունները կցվում են):

3. **Լսեցին** Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Կարեն Յուրիկի Ամիրբեկյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղոչիկյանը հաղորդեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Կ.Ամիրբեկյանը սկսած 2014 թ.-ի սեպտեմբերի 1-ից ասպիրանտուրայի հետազոտական մասը կատարում է Ֆրանսիայի Մոնպելիեյի համալսարանում: Հետազոտությունը իրականացվում է Երևանի պետական համալսարանի հետ համագործակցային <<BACKIS-ERASMUS MUNDUS>> ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում Կ.Ամիրբեկյանի կատարած աշխատանքը ընդգրկում է հայտնի նշանակիր Hoechst 33258-ի և դրա նոր ածանցյալների հետ ԴՆԹ-ի փոխազդեցության բազմակողմանի ուսումնասիրությունը կլանման էլեկտրոնային, ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի, շրջանային դիֆրոնիզմի և տեսական մեթոդների համատեղմամբ: Ավարտվել է նաև ատենախոսության խմբագրման և սեղմագրի ձևավորման հետ կապված աշխատանքները:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է երկու գիտական հոդված:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Կ.Յ.Ամիրբեկյանին:

Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Լևոն Սուրենի Սարգսյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան – Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղուչիկյանը հաղորդեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է հեմոգլոբին - գալաթթու և միոգլոբին – գալաթթու փոխազդեցությունները էլեկտրոնային կլանման սպեկտրաչափական մեթոդով, ինչպես նաև միոգլոբին - դաբադաթթու փոխազդեցությունը ֆլուորեսցենտային առաքման սպեկտրաչափական մեթոդով: Որոշվել է սպիտակուց - լիզանոլ կապման թերմոդինամիկական բնութագրերը: Ավարտվել է նաև ատենախոսության խմբագրման և սեղմագրի ձևավորման հետ կապված աշխատանքները:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է երկու գիտական հոդված:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Լ.Ս.Սարգսյանին:

Լսեցին – Էկոլոգիական անվտանգության կենտրոնի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Վահագն Արսենի Պետրոսյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը նշեց, որ ասպիրանտը ավարտել է թեկնածուական ատենախոսությունը և ներկայացրել ՀՀ ԲՈՀ-ի 005 մասնագիտական խորհուրդ «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ: Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը տվել է դրական եզրակացություն ատենախոսության վերաբերյալ:

Որոշեցին – Հաշվի առնելով Էկոլոգիական անվտանգության կենտրոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Վ.Ա.Պետրոսյանին:

Լսեցին – Էկոլոգիական անվտանգության կենտրոնի 2-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Արսեն Գևորգի Սիմոնյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը նշեց, որ ասպիրանտը հանձնել է ընդհանուր պատրաստության կրթամասով ստուգարքներ հետևյալ դասընթացներից՝ «Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մանկավարժություն», «Հոգեբանություն», «Գիտական և գործնական գրագրություն և հաղորդակցում», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ» առարկաները և Մասնագիտական պատրաստվածության կրթամասով՝ «Շրջակա միջավայրի ֆիզքիմիա», «Ֆլորեսցենտ մեթոդները կենսաբանական համակարգերում» առարկաները: Ասպիրանտը մասնակցել է 5 միջազգային գիտական կոնֆերանսների և ունի տպագրված 2 հոդված և 5 թեզիս:

Հարցը քննարկվել է Էկոլոգիական անվտանգության կենտրոնում և հաշվի ասպիրանտի կատարած աշխատանքները կենտրոնը երաշխավորել է ատեստավորման:

Որոշեցին – Հաշվի առնելով Էկոլոգիական անվտանգության կենտրոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Ա.Գ.Սիմոնյանին:

4. Լսեցին – ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի ասպիրանտ Կարեն Յուրիկի Ամիրբեկյանի թեկնածուական ատենախոսությունը և թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի՝ հաստատված 2013թ-ի սեպտեմբերի 20-ին կայացած ֆակուլտետի խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 1), ճշգրտման հարցը:

Արտահայտվեցին - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղոչիկյանը, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ. Մարգարյանը և ամբիոնի դասախոսներ Ա.Մարտիրյանը, Ա.Խաչատրյանը և Հ.Սարգսյանը: Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Մարգարյանը հայտնեց, որ հաշվի առնելով ատենախոսության բովանդակությունը առաջարկվում է հետևյալ թեման «Hoechst 33258-ի և դրա նոր ածանցյալների հետ ԴՆԹ-ի փոխազդեցության ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը»:

Որոշեցին – Ելնելով ատենախոսության բովանդակությունից ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի ասպիրանտ Կարեն Յուրիկի Ամիրբեկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «Hoechst 33258-ի և դրա նոր ածանցյալների հետ ԴՆԹ-ի փոխազդեցության ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը» Բ.00.04 «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ, աշխատանքի գիտական ղեկավար քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի առկա ասպիրանտ Լևոն Սուրենի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի՝ հաստատված 2013թ-ի սեպտեմբերի 20-ին կայացած ֆակուլտետի խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 1), ճշգրտման հարցը: Ատենախոսության վերնագրի փոփոխությունը բխում է ավարտված ատենախոսության բովանդակությունից:

Որոշեցին – Հաշվի առնելով ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի միջնորդությունը առկա ասպիրանտ Լևոն Սուրենի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «Գալաթթվի և դաբադաթթվի հետ միոզլոբինի ու հեմոզլոբինի փոխազդեցությունների ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները» Բ.00.04 «Ֆիզիկական քիմիա» մասնագիտությամբ, աշխատանքի գիտական ղեկավար քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյան:

5. Լսեցին՝ Տիգրիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի ապիստենտ Ս.Ն.Ափոյանի «Դեղաբույսերում քլորոֆիլի և կարոտինոիդների քանակական որոշումը էլեկտրոնային կլանման և ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդներով» ուսումնամեթոդական աշխատանքի տպագրության հարցը:

Արտահայտվեցին՝ Խորհրդի նախագահ, պրոֆ. Ս. Վ. Ղուչիկյանը նշեց, որ Ս. Ն. Ափոյանի ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ արտաքին գրախոսման: Երկրորդ փուլի գրախոսը՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, դոկտր, պրոֆեսոր Պ.Ն.Վարդևանյանը նշել է աշխատանքի անհրաժեշտությունը առարկայի դասավանդման համար և երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝ Հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար, այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով), համալսարանի միջոցների հաշվին:

6. Լսեցին – Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, քիմ. գիտ. դոկտոր Նարինե Անժելոյի Դուրգարյանին պրոֆեսորի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

Արտահայտվեցին – Խորհրդի նախագահ, պրոֆ. Ս. Վ. Ղուչիկյանը և մրցութային հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ի. Լ. Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ պրոֆեսորի կոչման հավակնորդ Ն. Ա. Դուրգարյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Ն.Ա. Դուրգարյանը աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարել է բազմաթիվ կուրսային, ավարտական, դիպլոմային աշխատանքներ, ինչպես նաև մագիստրոսական թեզեր, նրա ղեկավարությամբ պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Նրա կողմից դասավանդվող դասընթացներն են՝ Բարձրամոլեկուլային միացությունների քիմիա, Բարձրամոլեկուլային միացությունների ֆիզիկական քիմիա, Բիոօրգանական քիմիա, Կենսաակտիվ պոլիմերներ, Բնական պոլիմերներ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է պոլիմերային քիմիայի տեսությունը, քլորօբսիրանների քիմիան, էլեկտրաակտիվ, կոմպլեքսագոյացող, կենսաակտիվ բարձրամոլեկուլային միացությունների սինթեզը տարբեր մեթոդներով:

Ն.Ա.Դուրգարյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում մասնակցել է 2 միջազգային դրամաշնորհների աշխատանքներին և այժմ

գործող ՀՀ ԿԳՆ ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորման 15T-1D347 թեմայի ղեկավարն է: Ն.Ա.Դուրգարյանը ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող Օրգանական Քիմիայի 010 մասնագիտական խորհրդի, ինչպես նաև դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի խորհրդի անդամ է:

Ն.Ա.Դուրգարյանը հեղինակ է 62 գիտական աշխատանքների, որոնցից 2-ը ուսումնամեթոդական աշխատանք, 1-ը հեղինակային իրավունք, 33-ը գիտական հոդված և 26-ը թեզիսներ են: Վերջին հինգ տարում հրատարակել է 7 հոդված, 1 ՀՀ արտոնագիր, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ և միջազգային գիտաժողովներում նրա կողմից ներկայացվել է 11 թեզիս: Ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 3 հոդված, 1 արտոնագիր, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ և միջազգային գիտաժողովներում նրա կողմից ներկայացվել է 9 թեզիս:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ **նախագահ՝** Ռ. Պ. Մխիթարյան, **անդամներ՝** Լ.Գաբրիելյան, Ա. Սարգսյան:

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 32 անդամներից 24-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 24 անդամներ: Ն.Ա.Դուրգարյանին պրոֆեսորի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 22 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 2 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ն.Ա.Դուրգարյանին երաշխավորեց (Բ.00.06- Բարձրամուլեկուլային միացություններ մասնագիտությամբ) պրոֆեսորի կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝

Տ. Վ. Ղոչիկյան

Գիտ. քարտուղար, դոցենտ՝

Ա. Ի. Մարտիրյան